



















# ԻՋԵՎԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2022-2026թթ

EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի
համայնքապետարան

Իջևան բազմաբնակավայր համայնքի 2022-2026թթ. մշակութային զարգացման ռազմավարական պլանը մշակվել է
«ԵՄ-ն՝ հանուն մշակույթի» ծրագրի շրջանակում

Ռազմավարական պլանը մշակվել է
Եվրամիության ֆինանսական աջակցությամբ և
«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի փորձագիտական աջակցությամբ՝
Իջևան բազմաբնակավայր համայնքի հետ սերտ համագործակցությամբ



EU4Culture

**Բովանդակություն**


- Համայնքի ղեկավարի ուղերձը 4
- Ներածություն. համայնքի ղեկավարի մասին 5
- Իջևան բազմաբնակավայր համայնք. բնակավայրերի նկարագրությունը 6
- Գործընթաց և մեթոդաբանություն 10
- Խնդիրների վերհանում, առաջնահերթությունների որոշում 12
- Մշակույթի ոլորտում առկա՝ վերհանված հիմնախնդիրները 14
- Առաջնահերթությունների վերհանման մեթոդ 15
- Խնդիրների դասակարգումն ըստ առաջնահերթությունների 16
- Մշակութային խնդիրների քննարկում և լուծումների առաջարկում համայնքի արվեստագետների և երիտասարդների կողմից 17
- Մշակութային և ստեղծարար ճյուղերի մարտահրավերների քարտեզագրում և ուսումնասիրություն 19
- Հեռախոսային սոցիոլոգիական հարցում 20
- Գործընկերային փորձի փոխանակում Իջևանի և արտասահմանյան քույր-քաղաքների հետ 21
- Փորձի փոխանակում հայաստանյան գործընկեր համայնքների հետ 23
- Շահակիր կողմերի քարտեզագրում և վերլուծություն 28
- Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն 33
- Տեսլական 34
- Գործողությունների ծրագիր 35
- Մշտադիտարկման և գնահատման պլան 45

# ԻՆՉՈ՞Ւ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

ԻՋԵՎԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Նոր ժամանակները իրենց հետ բերում են նոր մարտահրավերներ և նոր հնարավորություններ: 21-րդ դարում մշակույթը և ընդհանրապես ստեղծարար ճյուղերն աստիճանաբար դառնում են համաշխարհային տնտեսության կարևորագույն շարժիչ ուժերից մեկը: Իջևանը Հայաստանի բացառիկ համայնքներից է, որը կարևորել է մշակութային զարգացման ռազմավարության մշակումը և իրականացումը: Շուրջ 6 ամիս տևած համատեղ աշխատանքի արդյունքում, տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքի շահակիր կողմերն եկան համոզման, որ արդեն ժամանակն է վերանայել և արդիականացնել համայնքի մշակութային զարգացման մոտեցումները: Իջևան միավորված համայնքը իր համայնքային զարգացումը և աշխատելաոճը նորովի վերանայելու և գնահատելու կարիք ունի, սակայն վստահ է, որ մշակույթի միջոցով Իջևան խոշորացված համայնքի բոլոր բնակիչների մոտ կձևավորվի նորաստեղծ համայնքին պատկանելու ամուր զգացողություն, ինչպես նաև կամրապնդվի սեփականության զգացումը առկա և ստեղծվելիք նյութական և ոչ նյութական արժեքների նկատմամբ:

Անհրաժեշտ է մշակույթը դիտարկել ոչ միայն զուտ գրականության, արվեստի, ճարտարապետության և արհեստի գործերի ստեղծում և միջոցառումների անցկացում, այլ որպես բազմաբովանդակ գործունեություն, որը հիմնված և կառուցվում է համայնքի հարուստ պատմական և մշակութային ժառանգության վրա, որը համայնքի համար ապահովում է համընդհանուր տեսլական և ինքնություն, որը ստանձնում է դառնալ տեղական տնտեսական զարգացման շարժիչ ուժերից մեկը՝ հիմնված զբոսաշրջության և ստեղծարար ճյուղերի վրա, որը նպաստում է համայնքում կյանքի որակի բարձրացմանը և բնակչության ներգրավվածությանը մշակութային գործունեության մեջ և որն ապահովում է առողջապահության և բարեկեցության մարտահրավերներին դիմակայելու նոր մոտեցումներ: Իջևանում հետզհետե համոզվում են, որ մշակույթի էության նման ընկալման վրա հիմնված ռազմավարությունը կունենա իրական սոցիալ-տնտեսական ազդեցություն:

Ռազմավարությունը մշակվել է հաշվի առնելով համայնքի ներկա սոցիալ-տնտեսական մարտահրավերները՝ ներառյալ, բայց ոչ միայն, առողջությունն ու բարեկեցությունը, շարժունակությունը, սոցիալական ներառականությունն ու բնապահպանական կայունությունը: Ռազմավարությունը հավակնում է դառնալ նշված մարտահրավերների դիմակայման և հասցեագրման գործիք՝ նպաստելով համայնքի տնտեսական աճին և բարեկեցությանը:

Ռազմավարության սկզբունքներն ու զարգացմանն ուղղված մոտեցումները համահունչ են ոլորտում Հայաստանի և Տավուշի մարզի համար պետության որդեգրած քաղաքականությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին՝ մասնավորապես ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրին, ՀՀ Տավուշի մարզի 2019-2024թթ Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգին և Երիտասարդության պետական քաղաքականության 2018-2022թթ ռազմավարությանը:
Համոզված եմ, որ համատեղ ջանքերով հաջողությամբ կիրականացնենք մեր առջև դրված մշակութային զարգացման խնդիրները՝ ի նպաստ մեր համայնքի հետագա կայուն զարգացման:

Հարգանքով՝ Արթուր Ճաղարյան, Իջևան համայնքի ղեկավար

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

- Իջևան բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է 2021թ նոյեմբերին, որի կազմի մեջ մտնում են 19 բնակավայր՝ Իջևան կենտրոն բնակավայրով:
- Իջևանը քաղաքը ՀՀ Տավուշի մարզի վարչական, կրթական, մշակութային կենտրոնն է: Այն շրջապատված է անտառածածկ լանջերով, լեռներով, ալպիական մարգագետիններով: Այն գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում, Աղստև գետի հովտում, մայրաքաղաքից 134 կմ հեռավորության վրա:
- Քարվանսարա-Իջևանը, որպես բնակավայր հիմնադրվել է 1807թ: Տեղի բնակչության ձևավորման գործում կարևոր դեր են ունեցել նաև շրջակա գյուղերի բնակիչները, որոնց կազմում կային 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղից տեղահանվածներ: Իջևան բազմաբնակավայր համայնքը հարուստ է իր հազարամյա պատմա-ճարտարապետական և մշակութային ժառանգությամբ:
- Իջևան քաղաքը գտնվում է հանրապետական և միջպետական նշանակության մայրուղու վրա և ունի տեղական նշանակության ճանապարհների ցանց:

# ԻՋԵՎԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔ. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԻՐՃ

## Ազատամուտ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 16 կմ հյուսիս-արևելք: Այն հիմնադրվել է 1970թ. և մինչև 1978թ. կոչվել է Բենտոնիտային կավերի գործարանին կից ավան: Բնակչությունը հիմնականում աշխատել է բենտոնիտի գործարանում և զբաղվել առևտրով:

## Ակնաղբյուր



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Աղստևի ձախափնյակում, Իջևանից 11 կմ հյուսիս: Գյուղից հարավ կա մի սրբատեղի՝ դարավոր մի կաղնի, որն ըստ ավանդույթի, տնկել է Վարդան Մամիկոնյանը 450թ. Խաղխաղի ճակատամարտից վերդառնալիս: 1978թ. կաղնին տապալվել է: Նրա կողքին մարշալ Բաղրամյանը մի նոր կաղնի է տնկել:

## Աճարկուտ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 25 կմ հյուսիս-արևմուտք, Քարահան գետի ափին: Աճարկուտի շրջակայքում են գտնվում «Առաքելոց»” (XIII-րդ դ.), «Դեղձնուտ» (X-XVII-րդ դդ.), «Կիրանց» (XIV-րդ դ.) վանքերը, իսկ հարավային մասում է գտնվում XVII-րդ դդ. «Սբ. Աստվածածին եկեղեցին»:

## Այգեհովիտ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Աղստև գետի ստորին հոսանքի աջափնյա մասում, Իջևանից 17 կմ հյուսիս-արևելք: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 760 մ է: Այգեհովիտի հուշարձաններից են՝ XII-XIV-րդ դ. «Սրվեղի» վանքը և XII-XIX-րդ դդ. «Կոտրած եղցի» եկեղեցին: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ և անասնաբուծությամբ: Բնակավայրը հայտնի է իր հոնի օղիով:

## Աչաջուր



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 18 կմ հյուսիս, Աղստևի հովտում, ծովի մակարդակից 750 մ բարձրության վրա: Աչաջուրցիները բնիկներ են: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և խոզաբուծությամբ: Աչաջուրից 4 կմ արևմուտք՝ գտնվում է Մակարավանքի վանական համալիրը (X-XIII-րդ դդ.):

## Բերքաբեր



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 22 կմ հյուսիս, Աղստև գետի ձախակողմյան վտակ Ոսկեպար գետի ծորում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 700 մ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և ծխախոտագործությամբ:Գյուղի և ջրամբարի միջև կա մ.թ.ա. 3-րդ հազարամյակի դամբարանադաշտ:

## Դիտավան



Գտնվում է Տավուշի մարզում, Իջևանից 14 կմ հյուսիս-արևելք, Աղստև գետի աջ կողմում: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Դիտավանից 2 կմ հարավ-արևմուտքում գտնվում են մ.թ.ա. 2-րդ դ. 1-ին հազարամյակի «Ճգնավորի քար» ամրոցը, «Հացուտի» եկեղեցին և XII-XIII -րդ դարերի խաչքարերով գերեզմանոց:

## Լուսահովիտ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 6 կմ հյուսիս-արևելք, նախկին Իջևանի շրջանի արևելյան մասում, Աղստևի անտառապատ հովտի աջ լանջին, Խաշթառակ գյուղից 3 կմ հարավ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և ծխախոտագործությամբ: Լուսահովիտի մեջ է գտնվում VII-XIII-րդ դդ. «Մորո- Ձորո» վանքը:

## Լուսաձոր



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 6 կմ հյուսիս, Մթնաձոր գետի ստորին հոսանքի շրջանում: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և ծխախոտագործությամբ:

## Խաշթառակ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 6 կմ հյուսիս-արևելք, Աղստև գետի աջ ափին: Գյուղի անվանումը ի սկզբանե եղել է Խաչթառակ («Խաչ+թառ+ակ»), քանի որ գյուղի տարբեր կողմերում կառուցված են եղել խաչեր: Բնակչությունը զբաղվում է ծխախոտագործությամբ, այգեգործությամբ, և անասնապահությամբ: Գյուղում են նկարահանվել «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմից տեսարաններ: Նկարում՝ «Ռևազի քարն է»՝ նշված հանրահայտ ֆիլմից:

## Կիրանց



Գտնվում է Տավուշի մարզում, Իջևանից 24 կմ հյուսիս-արևմուտք, Քարահան (Կիրանց) գետի ձախ ափին: Պատմականորեն հայտնի է եղել Կունեն անվանումով, որը, ըստ Աշխարհացույցի եղել է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Մեծ Կուենք գավառի կենտրոնը: Կունենի երկու թաղամասերն իրար հետ կապված են մինչ օրս կանգուն լայնաթռիչք, միակամար, քարե կամրջով, որը հայտնի է Սրանոցի կամուրջ անվանումով (նկարում): Արևելյան կողմում պահպանվել է միջնադարյան իջևանատունը:

## Ներքին Ծաղկավան



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 22 կմ հյուսիս-արևմուտք, Ոսկեպար գետի հովտում: Հնում, Ծաղկավանի տարածքը մտնում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կողբոփոր գավառի մեջ: Հայտնի է եղել նաև Մելիքգյուղ անվամբ՝ որպես մելիքների նստավայր: Բնակչության մեծ մասը զբաղվել է գյուղատնտեսությամբ՝ այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ Նկարում՝ Ոսկեպարի/Ջողազի ջրամբարն է:

## Սարիգյուղ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից 19 կմ հյուսիս, Աղստև գետի ձախ կողմում: Գյուղում է գտնվում յուրահատուկ մի ծառ, որի բնից դուրս են գալիս 13 ամուր ճյուղեր, դառնալով առանձին ծառեր, որը խորհրդանշում է Քրիստոսին և նրա աշակերտներին: Լեգենդի համաձայն ծառը 7 տարին մեկ անգամ ինքնայրվում է: Գյուղի տարածքում կան մանգանի, ագաթի և բենտոնիտային կավերի հանքավայրեր: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

## Սևքար



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 18 կմ հյուսիս, Աղստև և Սևքար գետերի միջև: Գյուղը ծովի մակերևույթից 700 - 2500 մ բարձրության վրա է: Տարածքի զգալի մասը անտառապատ է: Աճում են 120 բուսատեսակներ, հիմնականում՝ հաճարենի, կաղնի, բոխի, ինչպես նաև, ընկուզենի, լորենի, հացենի, կեչի, գիհի: Բնակչությունը զբաղվել է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Սևքարը ազգային-ազատագրական պայքարի հայտնի դեմքերից՝ ֆիդայի Սևքարեցի Սաքոյի ծննդավայրն է:

## Վազաշեն



Տավուշի մարզի արևելքում, մարզկենտրոնից 20 կմ հյուսիս-արևելք, Վահագնի լեռների լանջին, հայ-ադրբեջանական շփման գծից 1 կմ հեռավորության վրա:
Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտուղբանջարեղենի մշակությամբ և անասնապահությամբ:

## Ենոքավան



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից մոտ 4 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Սառնաջուր գետի ափին: Նախնիները 19-րդ դարի կեսերին այստեղ են եկել Սևքար գյուղից:
Ենոքավանի մեջ է մ.թ.ա. 2-րդ դ. 1-ին հազարամյակի «Աստղի բլուր» դամբարանադաշտը: Շրջակայքում են Սբ. Սարգիս (XIII դ.), Սբ. Հովհաննես (XII-XIV-րդ դդ.), «Սբ. Օկնախաչ» (XII-XIII -րդ դդ.) եկեղեցիներն ու Սբ. Աստվածածին (XIII դ.) և Սբ. Սարգիս (XII-XIII-րդ դդ.) մատուռները:

## Գանձաքար



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևան բնակավայրից 5 կմ հարավ-արևելք, Ուրթուջուր գետի ափին, ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: Բնակավայրում գտնվում է «Թանիկ» ամրոցը (վաղ միջնադար), «Խոջաբլուր» գյուղատեղին, Սբ. Գևորգ եկեղեցին (XII-XX-րդ դդ.): Տեսիլք լեռան լանջին է գտնվում «Բուդուրի եղցի» եկեղեցին (XII դ.), 4 կմ հարավ՝ «Գմբեթ» եկեղեցին (XII-XIII-րդ դդ.), 6 կմ արևմուտք՝ «Աղջկա բերդ» ամրոցը (X-XIII-րդ դդ.), 2 կմ արևելք՝ Սբ. Կիրակի մատուռը (1286թ.):

## Գետահովիտ



Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևանից մոտ 1 կմ հյուսիս-արևմուտք, Սառնաջուր գետի ստորին հոսանքում, ծովի մակերևույթից 835 մ բարձրության վրա: Գետահովիտ 2 հին քարանձավի պեղումները շարունակում են զարմացնել մասնագետներին իրենց գտածոներով: Գետահովիտից 1,5 կմ հյուսիս-արևելքում գտնվում է «Մրգաշեն» գյուղատեղին (XII-XIII-րդ դդ.), որտեղ նշմարվում են եկեղեցիների և գերեզմանոցի ավերակներ, իսկ 11 կմ արևմուտք՝ «Կըռանա-Տուխտ» գյուղատեղին (XII-XIII-րդ դդ.):

# ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՄ-Ն՝ ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ -«ՈՒՐԲԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ

ՏԵՍԼԱԿԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

# ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ - «ՈՒՐԲԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



## ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ

Իրականացվեց Իջևան բազմաբնակավայր համայնքի բնակավայրերի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության մասին նախանական տեղեկատվության հավաքման և ուսումնասիրման աշխատանքներ՝ փաստաթղթային ուսումնասիրության և հարցաթերթերի կիրառմամբ տեղեկատվության հավաքման միջոցով:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՈՒՄ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

ք.Իջևան, Երևանյան 6, Հեռ. (0263)42138

*24 հունվար 2022թ.*

ԻՋԵՎԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի մշակութային զարգացման ռազմավարության մշակման և համայնք բնակավայրերից ընտրված ենթակառուցվածքի վերանորոգման նպատակով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

- Արթուր Ճաղարյան- Հանձնաժողովի նախագահ, Իջևան համայնքի ղեկավար
- Արարատ Պարոնյան Տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի պետ
- Արտեմ Ոսկանյան-Ֆին բաժնի պետ Լիլիթ Ղալումյան
-Կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ
- Հայկ Ասիլյան«Վերնատուն» պատկերասրահի տնօրեն
- Լիա Ճաղարյան-Իջևանի համայնքապետարանի լրագրող
- Արթուր Այդինյան-Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի պետ
- Հրանտ Ներսիսյան- Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար

2. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով

- Արթուր Ճաղարյան-Հանձնաժողովի նախագահ, Իջևան համայնքի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝

- Լիլիթ Ղալումյան-Իջևանի համայնքապետարան, կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պե
- Հայկ Ասիլյան-«Վերնատուն» պատկերասրահի տնօրեն
- Գևորգ Թադևոսյան-«ՍՕՍ մակական գյուղեր» Իջևանի մասնաճյուղի տնօրեն

Համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվեց մշակութային զարգացման ռազմավարության մշակման հանձնաժողով և աշխատանքային խումբ՝ բաղկացած համայնքի մշակութային ոլորտի ներկայացուցիչներից, որոնցում կայացնողներից և համայնքի այլ շահակիր կողմերից:



2. Ձեր բնակավայրը ունի՞ իր **ուրույն բարբառը** կամ Իջևան բազմաբնակավայր համայնքի **ո՞ր բնակավայրերի բարբառներին է նման**

Իջևանի բազմաբնակավայր համայնքի բարբառներից Աչաջուր համայնքն ունի իր ուրույն բարբառը,մի քիչ նմանվում է Սևքարի,Ակնաղբյուրի,Խաշթառակի բնակավայրերի բարբառներին:

3. Կա՞ն հայտնի արվեստագետներ, գիտնականներ, հասարակական գործիչներ, ովքեր են ծնվել ձեր բնակավայրում (օրինակ՝ գրողներ, բանաստեղծներ, երգիչներ, կոմպոզիտորներ, գյուտարարներ, ճարտարապետ/քանդակագործներ, դերասաններ, նկարիչներ և այլն) – **թվարկեք անունները՝ մի փոքր նկարագրությամբ**

Գյուղն ունի շատ հայտնի ու նշանավոր մարդիկ՝

Հրանտ Թամրազյան-գրականագետ,ակադեմիկ

Հրաչյա Թամրազյան-գրականագետ,ակադեմիկ

Աշոտ Օհանյան-դոկտոր պրոֆեսոր,գրականագետ

Սերգեյ Աթաբեկյան-դոկտոր պրոֆեսոր,գրականագետ

Սուրեն Աթաբեկյան-ավիացիայի ինժեներ-կոնստրուկտոր, գնդապետ

Աշոտ Աթաբեկյան-երկրաբան, գիտնական

# ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՈՇՈՒՄ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԶՈՒԳԸՆԹԱՑ

Մշակութային ոլորտի հիմնախնդիրների բացահայտումը իրականացվել է մի քանի փուլով՝ մասնակցային եղանակով.

- Հեռախոսային սոցիոլոգիական հարցում. հեռախոսային հարցումն իրականացվել է հարցման համակարգչային գործիքի միջոցով: Գործիքը համայնքապետարանին տրամադրվել է ծրագրի շրջանակում: Հարցման գործիքի կիրառման համար համայնքապետարանի աշխատակիցները վերապատրաստում են անցել: Գործիքը հնարավորություն է տալիս համայնքի բնակչության հեռախոսահամարների ցանկից հարցման նպատակով պատահական ընտրել 400 հեռախոսահամար:
- Համայնքային ժողովներ. համայնքապետարանի և փորձագետների աջակցությամբ կազմակերպվեցին 8 համայնքային ժողովներ, որոնց մասնակցեցին Իջևան բազմաբնակավայր համայնքի բոլոր բնակավայրերի ավելի քան 400 բնակիչ: Բացահայտված հիմնախնդիրները դասակարգվել են երկու խմբի. հիմնախնդիրներ, որոնք ընդհանուր են բոլոր բնակավայրերի համար և հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են կոնկրետ բնակավայրերի:
- Գործընկերային փորձի փոխանակում. անցկացվել են մշակութային ոլորտի քաղաքականության և դրա իրականացման մասով փորձի փոխանակման հանդիպումներ հայաստանյան 10 գործընկեր համայնքների և ֆրանսիական Վալանս համայնքի հետ:
- Ուսումնասիրություն. կատարվել է մշակութային ու ստեղծարար ճյուղերի զարգացման հայաստանյան մարտահրավերների ուսումնասիրություն: Վեր են հանվել մասնավորապես քաղաքականության և ինստիտուցիոնալ այն բացերը, որոնք անհրաժեշտ են հաղթահարել մշակութային կյանքի զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով:
- Հիմնախնդիրների առաջնահերթությունների սահմանում. համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է 25 հոգուց բաղկացած հանձնաժողով և աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը մի քանի հանդիպումների արդյունքում վեր հանված հիմնախնդիրները դասակարգել է ըստ առաջնահերթությունների: Առաջնահերթությունները սահմանվել են հատուկ մեթոդաբանությամբ, որի կիրառման համար աշխատանքային խմբի անդամներն անցել են վերապատրաստում:
- Համադրում ոլորտի պետական քաղաքականության հետ. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին, ՀՀ Տավուշի մարզի 2019-2024թթ. Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգին և Երիտասարդության պետական քաղաքականության 2018-2022թթ. ռազմավարությանը:
- Խորհրդակցություններ «ԵՄ-ն՝ հանուն մշակույթի» փորձագետների հետ՝ հստակեցնելու մշակութային զարգացման ռազմավարության ուղղությունները, ծանոթանալու մշակութային քաղաքանության, մշակութային զարգացման ռազմավարության միջազգային լավագույն փորձին:
- Խորհրդակցություններ համայնքապետարանի հետ. որպես առաջնահերթություն դասակարգված հիմնախնդիրները համայնքի ղեկավարի և աշխատակազմի հետ քննարկելուց հետո, վերջնական տեսքի են բերվել:

# ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՈՇՈՒՄ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԶՈՒԳԸՆԹԱՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎ





ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ





ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ



# ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ՝ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

- Կարպետագործության, գորգագործության, կավագործության ավանդույթների խթանման և տարածման բացակայություն
- Համայնքի/բնակավայրերի խոհանոցի, ճաշատեսակների տարածման, փորձի փոխանակման, գույքագրման, ուսուցման բացակայություն
- Համայնքին հատուկ ավանդական արհեստների գույքագրման և վերապատրաստման կարիք
- Վարդավառի տոնի ընդլայնում. բնակավայրերի և Իջևանի սահմաններից դուրս
- Օտար լեզուների ոչ բավարար իմացություն
- Արվեստագետների մոտիվացիայի պակաս
- Աղստևի հովտի պատմական հուշարձանների ուսումնասիրության անհրաժեշտություն
- Վարքագծային փոփոխությունների կարիք - կարծրատիպեր, մոտիվացիայի պակաս, մեծահասակների ներուժի, փորձի օգտագործման պակաս /ToY/
- Թանգարանների, պատկերասրահների ներուժի ոչ լիարժեք՝ ժամանակակից միտումներին համահունչ, օգտագործում
- Ֆիլմերի, թատերական ներկայացումների կարիք
- Պատմամշակութային նշանակության վայրերի պեղումների կազմակերպան անհրաժեշտություն
- Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ստեղծման կարիք բնակավայրերում
- Զբոսաշրջավարների վերապատրաստման անհրաժեշտություն
- Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ մշակույթի խթանման կարիք
- Ժամանակակից միտումներին համահունչ ժամանցի վայրերի կարիք

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

**Այգեհովիտ**
- Սբ. Սրվեղի վանքի վերանորոգման անհրաժեշտություն

**Իջևան**
- Քանդակագործության սիմպոզիումի վերականգնում՝ նոր դիզայնի ու ու մոտեցումների ամրագրմամբ
- «Աղջկա» բերդի կիրառելիության բացակայություն՝ մշակութային և տնտեսական նպատակներով
- Տնայնագործական գորգագործության խթանման պակաս
- Կինոդիտումների կարիք

**Գանձաքար**
- Մշակութային կյանքը խթանող կենտրոնի անհրաժեշտություն
- Տիկնիկային թատրոնի բացակայություն
- Տեղական արտադրանքի հիման վրա արվեստի և արհեստի նմուշների ստեղծման խթանման պակաս

**Աչաջուր**
- Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի բացակայություն Մակարավանքի ճանապարհին
- Մակարավանքի լուսավորության բացակայություն
- Մշակույթի տան վերանորոգում, ջեռուցում

**Խաշթառակ**
- «Մենք ենք՝ մեր սարերը» հայտնի ֆիլմի մշակութային ներուժի թերի օգտագործում տուրիզմի խթանման համար
- Հնձի փառատոնի, թթվի փառատոնի անցկացման կարիք

**Դիտավան**
- «Կաթնով պատած» և «Համզոյի քար» կոչվող տարածքի արահետների կառուցման անհրաժեշտություն
- Համայնքային սեփականություն հանդիսացող Դիտավան սահմանամերձ բնակավայրի հյուրատան գործարկման անհրաժեշտություն

**Կիրանց, Բերքաբեր, Ակնաղբյուր, Սարիգյուղ**
- Հանրային կրթական և մշակութային տարածքների՝ որպես բազմաֆունկցիոնալ կրթական կենտրոնների ներուժի ոչ բավարար օգտագործում աշխատանքային ժամերից հետո

# ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴ

Այս մեթոդը կարելի է իրականացնել

- դեմ առ դեմ, հեռախոսով,
- էլկտրոնային փոստի միջոցով կամ առցանց որևէ գործիքով:

Նպատակ.

- պարզել համայնքի կամ տվյալ ոլորտի առնվազն 5 ամենակարևոր հիմնախնդիրը՝ ըստ գնահատող մասնակիցների:

Ըստ մասնագիտական փորձի՝ այս մեթոդն ունի որոշ հոգեբանական կողմ և թույլ է տալիս հնարավորինս իրատեսորեն գնահատել հիմնախնդիրները.

- շահակիրները սովորաբար հակված են որպես ամենակարևոր հիմնախնդիր առաջարկել այն հիմնախնդիրը, որում իրենց համայնքը, բնակավայրը, շահի խումբը, գուցե անձամբ իրենք շահագրգռված են:

- փորձը ցույց է տալիս, որ որպես երկրորդ, երրորդ և հաջորդ մյուս առաջնահերթություն շահակիրները հակված են առաջարկել իրենց համայնքի, բնակավայրի կամ ոլորտի համար իրոք ամենաօբյեկտիվ և առավել կարևոր հիմնախնդիրը:

- արդյունքում նշված հիմնախնդիրները/ ենթախնդիրները համադրվում են:

- Ամենաշատ նշվածներից ձևավորվում է հիմնախնդիրների առաջնահերթության ցանկը:

| | **Բնակավայրեր** | **Միավորներ** | | | | | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5 | 4 | 3 | 2 | 1 | |
| *Խնդիր 1* | **Աչաջուր** | | | | | | 0 |
| *Խնդիր 2* | **Իջևան** | | | | | | 0 |
| *Խնդիր 3* | **Դիտավան** | | | | | | 0 |
| *Խնդիր 4* | **Խաշթառակ** | | | | | | 0 |
| *Խնդիր 5* | --- | | | | | | 0 |
| *Խնդիր 6* | --- | | | | | | 0 |
| *Խնդիր 7* | --- | | | | | | 0 |
| *Խնդիր 8* | --- | | | | | | 0 |
| *Խնդիր 9* | --- | | | | | | 0 |
| *Խնդիր 10* | **և այլն** | | | | | | 0 |



# ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ | ՄԻԱՎՈՐ |
|---|---|
| Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ մշակույթի խթանման կարիք | 42 |
| Ֆիլմերի, թատերական ներկայացումների կարիք | 36 |
| Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ստեղծման կարիք բնակավայրերում | 36 |
| Օտար լեզուների ոչ բավարար իմացություն | 30 |
| Ժամանակակից միտումներին համահունչ ժամանցի վայրերի կարիք | 27 |
| Կարպետագործության, գորգագործության, կավագործության ավանդույթների խթանման և տարածման բացակայություն | 21 |
| Արվեստագետների մոտիվացիայի պակաս | 16 |
| Թանգարանների, պատկերասրահների ներուժի ոչ լիարժեք, ժամանակակից միտումներին համահունչ օգտագործում | 15 |
| Վարդավառի տոնի ընդլայնում բնակավայրերում և Իջևանի սահմաններից դուրս | 10 |
| Վարքագծային փոփոխությունների կարիք - կարծրատիպեր, մեծահասակների ներուժի, փորձի օգտագործման պակաս /ToY/ | 10 |
| Աղստևի հովտի պատմական հուշարձանների ուսումնասիրության անհրաժեշտություն | 9 |
| Համայնքի/բնակավայրերի խոհանոցի, ճաշատեսակների տարածման, փորձի փոխանակման, գույքագրման, ուսուցման բացակայություն | 7 |
| Պատմամշակութային նշանակության վայրերի պեղումների կազմակերպման անհրաժեշտություն | 7 |
| Զբոսաշրջավարների վերապատրաստման անհրաժեշտություն | 6 |
| Համայնքին հատուկ ավանդական արհեստների գույքագրման և վերապատրաստման կարիք | 3 |

| ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ | ՄԻԱՎՈՐ |
|---|---|
| **Կիրանց, Բերքաբեր, Ակնաղբյուր, Սարիգյուղ.** Հանրային կրթական և մշակութային տարածքների՝ որպես բազմաֆունկցիոնալ կրթական կենտրոնների ներուժի ոչ բավարար օգտագործում աշխատանքային ժամերից հետո | 35 |
| **Աչաջուր.** Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի բացակայություն Մակարավանքի ճանապարհին | 30 |
| **Աչաջուր.** Մակարավանքի լուսավորություն բացակայություն, Մշակույթի տան վերանորոգում, ջեռուցում | 25 |
| **Խաշթառակ.** «Մենք ենք՝ մեր սարերը» հայտնի ֆիլմի մշակութային ներուժի թերի օգտագործում տուրիզմի խթանման համար | 25 |
| **Իջևան.** Քանդակագործության սիմպոզիումի վերակազմակերպում | 24 |
| **Դիտավան.** «Կաթնով պատած» և «Համզոյի քար» կոչվող տարածքի արահետների կառուցման անհրաժեշտություն | 21 |
| **Իջևան.** Կինոցուցադրումների կարիք | 15 |
| **Գանձաքար.** Մշակութային կյանքը խթանող կետնրոնի անհրաժեշտություն | 11 |
| **Խաշթառակ.** Հնձի փառատոն, թթվի փառատոնի անցկացման կարիք | 10 |
| **Իջևան.** Տնայնագործական գորգագործության խթանման պակաս | 5 |
| **Այգեհովիտ.** Սբ. Սրվեղի վանքի վերանորոգման անհրաժեշտություն | 4 |
| **Իջևան.** «Աղջկա» բերդի կիրառելության բացակայություն՝ մշակութային և տնտեսական նպատակներով | 3 |
| **Գանձաքար.** Տիկնիկային թատրոնի բացակայություն | 3 |
| **Գանձաքար.** Տեղական արտադրանքի հիման վրա արվեստի և արհեստի նմուշներ ստեղծման խթանման պակաս | 3 |

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի մշակութային խնդիրները և դրանց լուծումները քննարկվել են շուրջ 50 արվեստագետների և երիտասարդների հետ, ովքեր ներկայացնում էին Իջևան, Աչաջուր, Խաշթառակ, Այգեհովիտ, Ազատամուտ, Աճարկուտ, Բերքաբեր, Լուսահովիտ, Սևքար բնակավայրերը, ինչպես նաև մասնակիցների հետ հարևան Նոյեմբերյան, Բաղանիս, Կողբ, Բերքավան, Վ. Ծաղկավան, Թեղուտ, Գոշ բնակավայրերից:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ



**Բարձրացված հարցադրումները, որոնց պետք է արձագանքի մշակութային ռազմավարությունը.**

- ինչու՞ պետք է գալ Իջևան,
- ինչպե՞ս ներկայացնել իջևանյան մշակույթը,
- ինչպե՞ս վաճառել արվեստի գործերը,
- ո՞րն է Իջևանի մրցակցային առավելությունը,
- ո՞րն է համայնքի ինքնությունը, ինչո՞վ է տարբերվում հարևան համայնքներից:

**Առաջարկվող գաղափարներ մշակութային ռազմավարության ծրագրերի համար.**

- «Տավուշը աշխարհի աչքերով» փառատոնի վերաբացում/իրականացում,
- անիմացիոն ֆիլմերի նկարահանում արվեստի ոլորտի մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ,
- բացօթյա անհատական արվեստանոցների հնարավորության տրամադրում Իջևանի քանդակների սիմպոզիումի տարածքում,
- գեղարվեստական լուսավորության անցկացում վերոհիշյալ տարածքում,
- խաղերի փառատոնի կազմակերպում,
- պատմա-երկրագիտական թանգարանի բացօթյա փոքր դահլիճը օգտագործել ամառային ցուցադրությունների համար,
- թանգարանի բաց պատշգամբը օգտագործելով որպես բեմ, ցուցադրել ֆիլմեր կամ թատերական ներկայացումներ,
- թանգարանում կազմակերպել Ծաղկի տոն, որտեղ կցուցադրվեն կենդանի ծաղիկներ, այլ նաև ծաղիկներով հագուստներ,
- թանգարանում կազմակերպել տիկնիկային թատրոն. բոլոր կերպարներին և հագուստները պատրաստել տեղում,
- մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, վարպետաց դասեր «Նովել» սրճարանում,
- նախկինում Իջևանի նկարիչների տան պատկերասրահի և Վերնատան վերագործարկում և վերաիմաստավորում,
- մշակութային կադաստր. ինտերակտիվ քարտեզ, բոլոր բնակավայրերում մշակութային հաստատությունների ու բիզնեսների քարտեզագրում, դրանց և դրանց հետ կապված իրականացված կամ իրականացվող ծրագրերի նկարագրություն,
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արվեստի մենեջմենթ/արվեստի շուկայագիտության դասավանդում,
- փառատոններ և փոքր արվեստանոց-արհեստանոցներ. այցելուները կարող են փորձել բուրդ գզել/մանել, կարպետ կամ գորգ գործել, ասեղնագործել/հելունով գործել, կավագործությամբ/փայտագործությամբ կամ քարագործությամբ զբաղվել, սալի պատրաստել,
- փառատոնային շաբաթի կազմակերպում,

- թելերի փառատոնի կազմակերպում,
- պլաստիկից ստացված թելով գործել կարպետներ,
- ֆիլմեր ցուցադրել, այդ թվում՝ Ոսկե ծիրանի ֆիլմերը,
- Իջևանի քանդակների այգին դարձնել Վերնիսաժ և արվեստի գործերի մշտական ցուցադրության և վաճառի վայր,
- տավուշյան Weekend (շաբաթավերջ) ավանդույթի ձևավորում,
- քանդակների այգում ապահովել մշտական մուրճի զնգոցը՝ աշխատող արվեստագետի արձանի մուրճի «հարվածներից»,
- ստանալ լոբու օղի և կազմակերպել Լոբի-լոբիլանդ-լոբբինգ փառատոն,
- բատիկայով զբաղվելու կանանց արվեստանոց, որոնք կարող են դասավանդել 3-4 տարեկանից բարձր երեխաների,
- ագաթի մշակում, փայտագործություն, կավագործություն, խաչքարագործություն և ստեղծված գործերի ցուցահանդես-վաճառք,
- փառատոնների ուղեկցումը երաժշտական խմբերի ելույթներով, «Հատիկ» բենդը կարող է միքս երաժշտություն մատուցել ներկաներին,
- Քանդակների այգու քանդակների մի մասը տեղափոխել Իջևան համայնքի այլ բնակավայրեր:

**Մշակութային գործող կամ պոտենցիալ ենթակառուցվածքներ.**

- Քանդակների սիմպոզիումի տարածք,
- մանկապարտեզներ և դպրոցներ,
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արվեստի ֆակուլտետ՝ կիրառական արվեստի և դիզայնի բաժին,
- Նոննա Ալավերդյանի արվեստանոց, Աչաջուր,
- Պատմա-երկրագիտական թանգարան,
- «Նովել» սրճարան,
- Տավուշի առաջնորդարանի դահլիճ,
- «Visit Tavush» զբոսաշրջային կենտրոն,
- Դպրոցների և մանկապարտեզների տարածքներ (դասերից հետո),
- Վահե Մայիլյանի սեփականությամբ ապագա մշակութային կենտրոն՝ երիտասարդ ստեղծագործողների համար:

**Գործող «մշակութահենք» բիզնեսներ**

- «Թելիկ կենտրոնը», որտեղ զբաղվում են «շուլալ կարպետագործությամբ», հելունագործությամբ, ասեղնագործությամբ, ժանյակագործությամբ և ձեռագործ արվեստի այլ տեսակներով. https://myarmenia.si.edu/hy/guide/experience/participate-carpet-weaving-master-class-learn-doily-techniques-and-how-paint-armenian-bi/,
- «Մարէ» ապրանքանիշը, հելունագործություն - տեքստիլային թելերից գործված զամբյուղներ և տարաներ, տե՛ս https://myarmenia.si.edu/hy/guide/buy-local/artisan/mare/,
- «Chibukhchyans' Art Studio» արվեստանոց. https://myarmenia.si.edu/hy/guide/buy-local/artisan/chibukhchyans-art-studio/,
- Գուրգեն Դալյանի մետաղամշակման արհեստանոց,
- Նոննա Ալավերդյանի արվեստանոց, Աչաջուր,
- «Նովել» սրճարան:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ




### ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

**Շրջանակից դուրս հայացք**. Հայաստանում, հատկապես համայնքներում, մշակութային գործունեության ընկալման շրջանակը խիստ նեղ է և սահմանափակվում է միայն երգի-պարի խմբակներով, ավանդական տոնակատարություններով եկեղեցիների ու հուշաձանների ցանկով:
Մշակութային գործունեության պատկերացումների շրջանակի ընդլայնումը և ստեղծարարության խթանումը հնարավորություն կտա ձերբազատվել խորհրդային հին մոտեցումներից, մեթոդաբանությունից ու գործելակերպից, երբ ստեղծարարությունն ու նախաձեռնողականությունը չէր խրախուսվում:

**Ապակենտրոնացում**. Մշակութային կյանքը կենտրոնացված է մեծ քաղաքներում:
Մշակութային կյանքի տեղափոխումը մայրաքաղաքից և մի քանի ավանդական քաղաքներից դեպի մարզեր ու բնակավայրեր պետք է դառնա կայուն ու երկարաժամկետ ռազմավարական մոտեցում:

**Կրթություն**. Ընդհանուր ուսումնական ծրագրերում չեն խթանվում ստեղծարարությունն ու ձեռնակատիրությունը: Գեղարվեստական կրթությունն ու ուսուցումը պետք է ներառեն կառավարման ու արդյունավետ հաղորդակցման հմտություններ: Ուսումնական ծարգրերը պետք է ունակ լինեն արձագանքելու նոր միտումներին ու շուկայի փոփոխություններին:

**Ենթակառուցվածքներ**.Համարյա ամենուրեք մարզերում առկա է մշակութային ենթակառուցվածքների պակաս: Դա վերաբերում է և՛ շենքային պայմաններին, և՛ սարքավորումներին ու գործիքներին: Առավել արդիական է դառնում տեղեկետվական տեխնոլոգիաների՝ մշակութային գործունեությանը ի սպաս դնելու անհրաժեշտությունը:

Ռազմավարության մշակման ընթացքում համայնքապետարանը, փորձագետների աջակցությամբ իրականացրել է Իջևան բազմաբնակավայր համայնքի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության քարտեզագրում: Համայնքն ունի պատմամշակութային ժառանգություն հանդիսացող **146 ամրոցներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր և հուշարձաններ**: Քարտեզագրումը ներառել է նաև բնակավայրերի խոհանոցը և բանահյուսությունը: Օրինակ.

**ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**: Վեճ է սկսվում մեր երկու հարևան կեղերի մեջ՝ Սևքար ու մեկ էլ Աչաճուր: Վեճը երկու կեղի սահմանների համար ա լըմ: Վիճաբանությունը վեր մեծանըմ ա, կանչըմ են Աչաճուր կեղի մի տարեց մարդու: Տարեց պապիկը իմանալով պանը ինչըմնա, պատրաստված ա քյնըմ: Տարեց ծերունին սահմանը անցնըմ ա ղըրա Սևքարի վրա, մի խելի անց ա կենըմ ու ասըմ ա – «Ես իմ հողի վրա եմ, սահմանը ըստիանցա ըսկըսում, դե գծեցե՛ք»: Վիճաբանությունը հարթվում է: Սևքարցիք հեռանըմ են հաշտ ու համերաշխ: Կեղացիք մեր տարեց պապիկին հարցնում են.- սահմանը բա չէ որ խախտել ենք, ինչն էր պատճառը: Ծերունին նստեց գետնին, հանեց տրեխները, թափ տվեց Աչաճից նախօրոք լցված հողը և խորհրդավոր ասաց.- «Ես իմ հողի վրա էի կըղնած: Սահմանը ըստիան էր»:

# ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ




## ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- **Բնակչության մասնակցությունը**. հարցման մասնակիցների 36%-ը ընդհանրապես չի մասնակցել մշակութային միջոցառումներին, 29%-ը մասնակցել է 3-4 տարի առաջ, իսկ 21%-ը՝ 1 տարի առաջ:

- **Մշակութային զարգացման խնդիրները**. մոտ 28%-ը համարում է, որ պատճառը ֆինանսավորման բացակայություն է, մոտ 15%-ը՝ մշակութային հարցերում բնակչության ներգրավման բացակայությունը, մոտ 10% -ը՝ մշակութային ենթակառուցվածքների բացակայությունը, մոտ 5% -ը՝ մշակույթի, զբոսաշրջության և տնտեսական զարգացման կապի բացակայությունը, մոտ 9% -ը՝ մշակութային կրթությունը, այլ համայնքների և երկրների հետ մշակութային կապերի բացակայությունը և մոտ 17% -ը՝ բոլոր վերոնշյալները:

- **Մշակութային խնդիրների լուծումը**. մոտ 36%-ը պատկերացնում է մշակույթի ոլորտի պետական պատշաճ ֆինանսավորմամբ, մոտ 21%-ը՝ մշակույթի և տնտեսության սերտաճմամբ, մասնավոր հատվածի ներգրավմամբ, մոտ 12%-ը՝ մշակույթի ոլորտի ինքնաֆինանսավորման մեխանիզմների ստեղծմամբ, մոտ 5%-ը՝ մշակութային ժառանգության ինտենսիվ ուսուցմամբ և մոտ 19%-ը՝ վերոնշյալ բոլոր միջոցներով:

- Իջևան բնակավայրի հարցման մասնակիցների 10%-ը և մնացած բոլոր 18 բնակավայրերի հարցման մասնակիցների ավելի քան 30%-ը իրենց բնակավայրերի մշակութային կյանքն համարում են անբավարարար:

Հարցմանը մասնակցել են տարբեր տարիքի 192 կին և 198 տղամարդ (3 հարցաթերթում սեռը չի նշվել):





Գործընկերային քննարկում, փորձի փոխանակում Իջևանի քույր՝ Վալանս քաղաքի Առևտրի և Զբոսաշրջության գծով փոխքաղաքապետ Գևորգ Ռաստգելենյանի հետ: Վալանս քաղաքը գտնվում է Ֆրանսիայում: Ինչպես Իջևանը, Վալանսը բազմաբնակավայր համայնք է բաղկացած 54 բնակավայրերից:

**Քննարկման հիմնական շեշտադրումները.**

- Վալանսն ունի մշակույթի ոլորտի մի քանի տարվա գործողությունների պլան՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով:
- 2014թ. հետո Ֆրանսիայում պետությունն այլևս չի ֆինանսավորում համայնքներին մշակութային խնդիրները լուծելու համար: Համայնքներն իրենց ուժերով պետք է զարգացնեն ոլորտը:
- Համայնքները ստիպված էին մտածել, թե ինչպես կարող են փոքր համայնքային բյուջեով զարգացնել մշակույթը, ինչպես կարող է մշակույթը հասույթ բերել, ինչպես կապել մշակույթը տնտեսական զագացման հետ, ինչն է պակասում քաղաքի մշակույթին և այլն:
- Գործողությունների պլանը մշակվել է մասնակցային եղանակով, բոլոր շահակիր կողմերի ներգրավմամբ՝ հրավիրելով համայնքային ժողովներ, ներգրավելով փորձագետներ, ինչպես նաև գործընկերներ մեծ ու փոքր քաղաքներից և գյուղերից:
- Գործողությունների պլանը անվանում են սոցիալ-մշակութային, քանի որ նպատակ ունեն մշակութային զարգացման մեջ ներգրավել ոչ միայն պրոֆեսիոնալներին, այլև հանրությանը:
- Վալանսի մշակութային զարգացման կարևոր սկզբունքներից է քաղաքի գրավչության բարձրացումը մշակույթի միջոցով, մշակույթը և դրա նկատմամբ հետաքրքրությունը քաղաքի սահմաններից դուրս բերելն է:
- Մյուս սկզբունքն է, որ միջոցառումները պետք է պարբերական բնույթ կրեն. օրինակ՝ իրականացվեն ամեն տարի նույն օրը:
- Վալանսը կարևորություն է տալիս հաղորդակցությանը և մարքեթինգին՝ ապահովելու քաղաքի ինքնությունը. քաղաքն ունի իր պատկերանիշը, նշանաբանը՝ «Իմ սիրտ՝ Վալանս», խթանում է, որ ժողովուրդը զգա հպարտություն և պատկանելիություն քաղաքին:
- Մշակութային ենթակառուցվածքների առկայությունը նույնպես շատ կարևոր է:

- Մյուս կարևոր սկզբունքը կրթության և կարողությունների բարելավումն է, հատկապես, երիտասարդների շրջանում՝ այն մատուցելով ժամանակակից նոր պահանջներին համահունչ, որպեսզի երիտասարդների կողմից ապահովվի շարունակականություն:
- Վալանսը խթանում է մշակույթի զարգացումը կենտրոն բնակավայրից դուրս, փոքր բնակավայրերում: Քաղաքն ունի իր տարեկան մշակութային ծրագիրը: Միջոցառումները պլանավորված են այնպես, որպեսզի խաչաձևումներ չլինեն և իրականացվեն տարբեր օրերի: Դա հնչեղացնում է միջոցառումը, ճանաչում է բերում փոքր բնակավայրին, ամրապնդում է դրա ինքնությունը:
- Մշակույթի աշխարհը «ծույլ» է համարվում, և Վալանսում ՏԻՄ-ը աշխատում է «հաշտեցնել» մշակույթի և բիզնեսի ոլորտները: ՏԻՄ-ը առիթներ և միջավայր է ստեղծում, որ այս երկու կողմերը հաճախ հանդիպեն, շփվեն և համագործակցեն:
- Վալանսում ՏԻՄ-ը բիզնեսին առանձնահատուկ տեղ է տալիս, հրավիրում է ժողովների, այցելում են բիզնես կառույցներ: Շատ միջոցառումներ կազմակերպում են ոչ միայն թատրոններում, այլ մասնավոր հատվածի աշխատավայրերում:
- Պետությունը հարկային արտոնություններ է տալիս մշակույթին աջակցող բիզնեսներին:
- Բիզնեսի համար կարևորը շահն է՝ հասույթի կամ համբավի տեսքով: Վալանսում հասել են նրան, որ բիզնեսը գիտակցում է, որ եթե նախկինում, հարկեր էր վճարում և այդ մասին ոչ ոք չգիտեր, ապա այժմ, երբ և՛ հարկ է վճարում, և՛ աջակցում է մշակույթին, բոլորը խոսում են իր մասին:
- Ռազմավարության մեջ Վալանսը կարևորում է բնապահպանական և մասնակցային մոտեցումները:

- Վալանսը պատրաստակամ է աջակցել քույր համայնք Իջևանին ռազմավարության իրականացման հարցում՝ համատեղ միջոցառումներ անցկացնելով՝ ներառյալ, բայց ոչ միայն ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում, տուրիզմի խթանման, այլ նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, կոնսերվատորիայի, արվեստի դպրոցի հետ համագործակցության միջոցով:

Իջևանի մշակութային խնդիրները բացահայտվեցին և խնդիրների լուծումներն առաջարկվեցին փորձի փոխանակման աշխատաժողովի ժամանակ, որին մասնակցում էին նաև Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի 9 համայնքների (Իջևան, Վանաձոր, Ալավերդի, Նոյեմբերյան, Կողբ, Նոյեմբերյան, Դիլիջան, Բերդ, Մարգահովիտ, Մարտունի) շուրջ 30 ներկայացուցիչներ:

«Երկխոսության սրճարան» (Café Dialogue) ինտերակտիվ մեթոդի միջոցով բոլոր մասնակիցները քննարկեցին և իրենց կարծիքները հայտնեցին Իջևանում մշակույթի զարգացմանը խթանող 5 հիմնական ուղղությունների շուրջ՝ վարպետաց դասեր, տոներ և փառատոններ, մշակութային ստեղծարար/նորարար կրթություն, մշակութային ստեղծարար/նորարար զբոսաշրջություն, մշակույթի և բիզնեսի ստեղծարար փոխգործակցություն:

Արդյունքում՝ բացահայտվեցին հետևյալ խնդիրները և առաջարկվեցին համապատասխան լուծումներ.

**Վարպետաց դասեր**

| Խնդիրներ | Լուծումներ |
|---|---|
| Զիավարության հմտությունների բուժիչ նշանակության արժևորման բացակայություն | Զիերով շրջագայության վարպետաց դասեր, որոնք ուղեկցվում են Իջևանի տարածքի ճանաչողական գիտելիքով ու տեղեկատվությամբ:<br>Զիերի միջոցով նոր տուրիստական արահետների բացահայտում և փաթեթների առաջարկ տուրիստական ընկերություններին: |
| Դեղաբույսերի հավաքման մշակույթի բացակայություն | Դեղաբույսերի հավաքման վարպետաց դասընթացների անցկացում, ուսումնական նյութերի պատրաստում: |
| Գաստրոտուրիզմի և էկոտուրիզմի, բացակայություն | Վարպետաց դասեր, տեղի ճաշատեսակների համտեսի և վաճառքի փառատոն: |
| Տարածաշրջանի երգի/ պարի փառատոնի անցկացման բացակայություն | Տարածաշրջանի երգի/ պարի փառատոնի անցկացում՝ տարածաշրջանի տարազների օգտագործմամբ և երգերի նորովի մշակմամբ: |
| Յայլաներում ժամանակավորապես ապրող անձանց կյաքի ու կենցաղի անտեսում | Յայլաներում կազմակերպել հնձի, ոչխարի, խոզի/բրդի լվացման և վերամշակման, թել մանելու վարպետաց դասեր: |
| Անտեսված են ավանդական զարդերի, ժայռերի փորագրման ավանդույթները | Կազմակերպել հին զարդանախշերի ուսումնասիրություն և դրանց կիրառում արծաթագործության և ոսկերչության մեջ:<br>Կազմակերպել վարպետաց դասեր ժայռաքանդակների ավանդույթը վերականգնելու նպատակով: |

**Տոներ ծեսեր փառատոններ**

| | Խնդիրներ | Լուծումներ |
|---|---|---|
| ▪ | Բացակայում է միասնական փառատոնների անցկացման ավանդույթը | Անցկացնել միջմարզային ԳԱԹԱՅԻ փառատոն, ներգրավելով բնակավայրերին և այցելուներին մասնակից դարձնելով պրոցեսին |
| ▪ | Ավանդական խաղերը մոռացվել են, նոր սերունդը չի խաղում բակային խաղեր | Վերականգնել բակային խաղերի ավնդույթը, մասնավորապես՝ Իջևանի տարածաշրջանին հատուկ խաղերինը՝ օրինակ, չլիկ: |
| ▪ | Իջևան ում բացակայում է նախկինում բնորոշ ծաղիկների աճեցումը | Վերականգնել ծաղիկներ ու բույսեր աճեցնելու մշակույթը, և անցկացնել ԾԱՂԿԻ/ԾԱՂԿԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ: |
| ▪ | Տավուշը հայտնի է եղել մեղրի արտադրությամբ, որը գնալով զիջում է իր դիրքերը | Անցկացնել ՄԵՂՐԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ փառատոն, որը համադրել երաժշտական խմբերի համերգով:<br>Աջակցել մեղր արտադրողներին/մեղվաբույծներին և հատապտուղներ հավաքողներին փաթեթավորման և վաճառքի հարցերում |
| ▪ | Իջևանի տարածաշրջանին յուրահատուկ է անտառի բարիքների հավաքումն ու օգտագործումը, սակայն դա պատշաճ չի ներկայացվում տարածաշրջան այցելուներին | Առաջարկվում է անցկացնել ԹԹՎԻ փառատոն որևէ սահմանամերձ գյուղի արոտավայրերում կամ դաշտերում և ցուցադրել թթվի բոլոր տեսակները՝ ճախաթթու, հոնի, զկեռի, լոբու և այլ պտուղների թթուների տեսակներ: |
| ▪ | Գրքի/տպագիր նյութերի փառատոն | Փառատոնի ժամանակ կցուցադրվեն հին ու նոր գրքեր, հին ամսագրեր, օրաթերթեր՝ մարդիկ, ժամանակակից գրողները հանդես կգան որպես գրքեր և կպատմեն տվյալ ժամանակաշրջանի մասին - Living Library |
| ▪ | Գորգերի և կարպետների հարուստ տրադիցիաների ցուցադրման հնարավորությունների բացակայություն | Վերականագնել տրադիցիաները, անցկացնել ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ և ԹԵԼԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ/ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ և այցելուներին մասնակից կդարձնեն դրանց ստեղծմանը, ինչպես նաև կպատմեն թելերի ստացման և գունավորման մասին: |
| ▪ | Հացի փառատոն երբևիցե չի անցկացվել Իջևանում | Անցկացնել ՀԱՑԻ փառատոն, որը կհամադրվի ՀՆՁԻ փառատոնի հետ |
| ▪ | Իջևանի տարածաշրջանին հատուկ է Վարդավառի և դրա հետ կապված ծեսերի անցկացումը | Անցկացնել Վարդավառի համընդանուր տոնակատարություն ողջ Տավուշի մարզում՝ վերականգնելով և նորովի մատուցելով տրադիցիոն մոտեցումները: |

**Մշակութային սետեղծարար կրթություն**

| Խնդիրներ | Լուծումներ |
|---|---|
| Փառատոնները անցկացվում են տրադիցիոն մեթոդներով ու մոտեցումներով | Առաջարկվում է փառատոնների անցկացման գաղափարախաղ/գաղափարաքաղ անցկացնել, որոնք կվերաբերեն նորարար/ստեղծարար գործիքներին, և որոնք կօգտագործվեն ծրագրի շրջանակներում փառատոններ/ միոցառումներ անցկացնելու համար: |
| Անիմացիոն ֆիլմեր նկարելու հնարավորություններ չունեն համայնքի պատանիներն ու երիտասարդները: | 1. Օգտագործել արվեստի դպրոցի նկարչական խմբակների սաների նկարները և դրանց միջոցով ստանալ մուլտիպլիկացիոն շարժական ֆիլմեր: 2. Համագործակցել Դիլիջանի Թումո կենտրոնի հետ՝ արտագնա դասեր կազմակերպել Իջևան համայնքում անիմացիոն ֆիլմերի հմտություններ զարգացնելու համար: |
| Համայնքային գրադարանների ֆունկցիաները հին են և քիչ օգտագործվող | Ստեղծել նոր գրադարան՝ առցանց հնարավորություններով, ինչպիսիք ստեղծվել են Դիլիջանում և Կապանում: Գրադարանի գաղափարը համադրել քննարկումների կենտրոնի և սրճարանի հետ: |
| Նոր գրքերի շնորհանդեսներ, արվեստի գործերի նորովի ցուցադրություններ, ֆիլմերի ցուցադրություն չի իրականացվում համայնքում | Կազմակերպել փայտի կամ քարերի լազերային նկարազարդում և փորագրություն, ամրագրել թվային տպագրության արդի հնարավորությունները: |
| Իջևան համայնքը չունի ֆիլմեր ցուցադրելու բավարար ենթակառուցվածքներ | Առաջարկվում է կազմակերպել ֆիլմերի բացօթյա ցուցադրություն՝ հատկապես սահմանամերձ բնակավայրերում: |
| Երեխաները կախվածություն ունեն համակարգիչներից և հեռախոսներից և չեն հետաքրքրվում մշակույթի և այլ ոլորտներով | Ստեղծել համակարգչային խաղեր և այդ խաղերի միջոցով բոլորին ներկայացնել տարածքի պատմամշակութային ժառանգությունն ու մշակութային արժեքներն ընդհանրապես: |

**Մշակութային սետեղծարար զբոսաշրջություն՝ տնտեսական լուծումներով**

| Խնդիրներ | Լուծումներ |
|---|---|
| Համայնքում զարգացած չեն գաստրոտուրիզմը, էկոտուրիզմը և համայնքահեն տուրիզմը: | Այդ նպատակով հատկապես պետք է օգտագործել սահմանամերձ գյուղերի հնարավորությունները, հատկապես՝ Դիտավանի նորաստեղծ |

| | |
|---|---|
| | համայնքային հյուրանոցի և այլ բնակավայրերի B&B-ների հնարավորությունները: |
| Տարածաշրջանում դեռևս հիմնովին ուսումնասիրված չեն պատմամշակութային ժառանգության հուշարձանները: | Զբոսաշրջիկներին հնարավորություն տալ մասնակցել պեղումներին: Կայուն կապեր հաստատել ՀՀ պատմության թանգարանի, պատմության ինստիտուտի, տարածաշրջանն ուսումնասիրող հնագետների հետ:<br><br>Իջևանի պատմա-երկրագիտական թանգարանը դարձնել ուսումնա-փորձնական կենտրոն և լիարժեք օգտագործել թանգարանի բոլոր հնարավորությունները՝ արդիականացնելով թանգարանային նմուշների ցուցադրությունն ու թանգարանի պատշաճ կառավարումը: |
| Իջևան համայնքում պատշաճ չի կառավարվում թափոնները: | Առաջարկվում է իրականացնել աղբի «կանաչ կառավարում» և նոր կյանք տալ երկրորդային օգտագործման կամ վերամշակման ենթակա թափոններին: |
| Եկեղեցիները և վանական համալիրները չեն օգտագործվում բազմանպատակ ու բազմաբովանդակ: | Մարտունու խումբն առաջարկեց վանական համալիրների շուրջ կազմակերպել փառատոններ, օրինակ՝ իրենք Վանևան վանական համալիրի տարածքում են կազմակերպում **ավելուկի փառատոնը**: |
| Իջևան համայնքում գրեթե չեն կազմակերպվում վրանային ճամբարներ: | Վրանային զբոսաշրջության պլենների կազմակերպում: |
| Համայնքում գրեթե չկան հատուկ վերապատրաստված տեղական գիդեր: | Առաջարկվում է ունենալ գիդերի պատրաստման/վերապատրաստման կրթական ծրագրեր կամ համայնքային կենտրոններում կամ տարածաշրջանային քոլեջում և/կամ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արվեստի բաժնում՝ կարճատև կուրսերի միջոցով: |
| Իջևանի մշակութային կյանքը և հնարավորությունները ներկայացնող էլեկտրոնային կամ տպագիր բավարար նյութեր չկան: | Համագործակցել Visit Tavush կենտրոնի հետ և զարգացնել զբոսաշրջության հնարավորությունները՝ համադրելով առաջարկ-պահանջարկ կոնցեպտուալ մոտեցումը և փաստահենք հետազոտությունները: |

**Մշակույթի և բիզնեսի ստեղծարար փոխգործակցություն**

| Խնդիրներ | Լուծումներ |
|---|---|
| Համայնքում մասնագետների կարիք կա, հատկապես արվեստի մենեջմենթի: Երիտասարդ ստեղծագործողները չեն կարողանում վաճառել իրենց ստեղծագործությունները: | Համայնքի բնակավայրերից որևէ մեկում ստեղծել արվեստի կենտրոն կամ բազմանպատակ համայնքային կենտրոն, որտեղ շարունակաբար կկրթվեն, կվերապատրաստվեն երիտասարդ արվեստագետները, |

| | |
|---|---|
| | կքննարկեն ու կհամաձայնեցնեն համայնքի զարգացման ռազմավարական մոտեցումները: |
| Համայնքում քիչ են երիտասարդ արվեստագետների աշխատանքների ցուցադրման և վաճառքի, այդ թվում՝ հուշանվերների վաճառքի կետեր/կենտրոններ: | Աջակցել երիտասարդ արվեստագետներին իրացնելու իրենց արտադրանքը:<br><br>Համագործակցել բիզնեսների հետ մասնավոր-հանրային համագործակցության, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և սոցիալական ձեռնարկատիրությունը խթանելու այլ ձևերը: |
| Իջևան համայնքում տնտեսավարող սուբյեկտները ներգրավված չեն մշակութային զբոսաշրջության զարգացման մեջ: Օրինակ՝ որևէ ձևով չի օգտագործվում Խաչատուր Քոքոբելյանի հսկայածավալ բիզնեսի հնարավորությունները: | Առաջարկվում է իր մասնակցությամբ և աջակցությամբ կազմակերպել «Ծաղկի փառատոն» և խաղողօրհնեքի արարողություն՝ ցուցադրելով՝ ավանդական հնձանը և ցուցադրելով խաղող ճզմելու արարողությունը պարի խմբերի աղջիկների մասնակցությամբ: |
| Բիզնեսները չունեն ռազմավարություններ ԿՍՊ-ի, հանրային-մասնավոր համագործակցության, բարեգործության և այլ մեխանիզմների մասին: | |

# ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԸ**

Շահակիր կողմը, ցանկացած անհատն է, սոցիալական խումբը կամ դերակատարը, որն ունի շահ, իրավական, բարոյական պարտավորություն կամ որևէ այլ մտահոգություն, շահագրգիռ է որևէ հանրույթի կամ կառույցի խնդիրների բացահայտման, որոշումների կայացման և իրականացման վերաբերյալ: Շահակիր կողմերը կամ ազդում են նպատակների իրականացման վրա, կամ կրում են իրականացման ազդեցությունը:

**Ի՞ՆՉ Է ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Շահակիր կողմերի վերլուծությունը հաստատությունների, խմբերի և անհատների բացահայտման և դրանց դասակարգման գործընթացն է՝ ըստ խնդրի լուծման ուղղությամբ նրանց մասնակցության մակարդակի, հետաքրքրության և ազդեցության: Այս գործընթացը ներառում է նաև շահակիր յուրաքանչյուր կողմի առավելագույն ներգրավումը և նրանց հետ հաղորդակցության ապահովում հիմնախնդրի լուծման ողջ ընթացքում:

Շահակիրների աղյուսակի օգնությամբ քարտեզագրվեցին հնարավոր բոլոր շահակիրները.

- Քննարկման միջոցով պատրաստվեց հնարավոր բոլոր շահակիրների ցանկը
- Նկարագրվեց յուրաքանչյուր շահակիր կողմը, դրանց դերն ու գործառույթները
- Նշվեց հիմնախնդրի լուծման հետ կապված շահակիր յուրաքանչյուր կողմի հետաքրքրությունը և հիմնախնդրի լուծման վրա վերջինիս ազդեցությունը
- Նշվեց հետաքրքրության և ազդեցության մակարդակը, օրինակ, մեծ, միջին, փոքր՝ հիմնախնդրի լուծման մեկնարկին և ավարտին:

### Որոշում կայացնողներ

| Շահակիր կողմեր | Նկարագրություն | Ծրագրի նկատմամբ հետաքրքր. մեկնարկին | Ծրագրի նկատմամբ հետաքրքր. ավարտին | Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. մեկնարկին | Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. ավարտին |
|---|---|---|---|---|---|
| **Համայնքի ղեկավար** | Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **մեծ** | | **միջին** | |
| **Համայնքի ավագանի** | | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **մեծ** | | **միջին** | |
| **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն** | Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացման քաղաքականության մշակում ու իրականացում, մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակում, ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և այդ ծառայությունների հասանելիության ընդլայնմանն ուղղված ծրագրերի իրականացման ապահովում: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **մեծ** | | **մեծ** | |
| **ՀՀ Տավուշի մարզպետարան** | Պետական կառավարման ապահովում մարզի տարածքում՝ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Համայնքներին մեթոդական աջակցության տրամադրում: Կապող օղակ համայնքների և կառավարության միջև: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **միջին** | | **միջին** | |
| **ՀՀ կառավարություն** | Գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Այն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը: Կառավարության իրավասությանն են ենթակա գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **միջին** | | **մեծ** | |
| **Քաղաքական կուսակցություններ** | Քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասն են և զգալի ազդեցություն ունեն տարբեր ոլորտների քաղաքականության մշակման և որոշումների | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կայացման վրա: Լոբբինգն ու մշտական շփումները, հատկապես նախընտրական շրջանում, կարող են նպաստել համայնքի տարբեր խնդիրների լուծմանը: | **միջին** | | **միջին** | |
| **ԱԺ պատգամավորներ** | Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Այն իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն: Հատկապես համայնքից ընտրված պատգամավորների հետ շարունակական աշխատանքը կարող է նպաստել համայնքի տարբեր խնդիրների լուծմանը: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **միջին** | | **մեծ** | |

**Տնտեսական ոլորտի շահակիրներ**

| *Շահակիր կողմեր* | *Նկարագրություն* | *Ծրագրի նկատմամբ հետաքրքր. մեկնարկին* | *Ծրագրի նկատմամբ հետաքրքր. ավարտին* | *Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. մեկնարկին* | *Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. ավարտին* |
|---|---|---|---|---|---|
| **Վիվասել** | Իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում հանրային ծառայություններ մատուցող մյուս ընկերությունները (կապի, ջրամատակարարման, էներգամատակարարման օպերատորները), մասնավոր հատվածի շատ կազմակերպություններ ( կաթնամթերք, հյութեր, գարեջրեր արտադրող ընկերություններ, սուպերմարքեթներ և այլն) աջակցում են հասարակությանը և համայնքներին՝ ապահովելով առողջ և ապահով աշխատատեղեր, մասնագիտական կատարելագործման և անհատական պատասխանատվությանը նպաստող միջավայր և բոլոր քաղաքացիների համար որակյալ ծառայություններ: | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **միջին** | | **միջին** | |
| **Հանրային ծառայություններ իրականացնող այլ ընկերություններ** | | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **ցածր** | | **միջին** | |
| **Սուպերմարքեթներ** | | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին | Մեծ, ցածր, միջին |
| | | **ցածր** | | **միջին** | |

## Հասարակական սեկտորի և դոնոր համայնքի շահակիրներ

| Շահակիր կողմեր | Նկարագրություն | Ծրագրի նկատմամբ հետաքրքր. մեկնարկին | Ծրագրի նկատմամբ հետաքրքր. ավարտին | Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. մեկնարկին | Ծրագրի վրա ունեցած ազդեցութ. ավարտին |
|---|---|---|---|---|---|
| **Բնակիչներ** | Լինելով առանցքային շահակիրներից մեկը, բնակչությունը ունի առաջարկվող ենթակառուցվածքի վրա ազդելու և անմիջապես ներգրավվելու ներուժ: Սակայն սկզբնական փուլում բնակիչները գիտելիքի և կարողությունների կարիք ունեն, որը կնպաստի նրանց հետաքրքրության և աջակցության բարձրացմանը: | Մեծ, փոքր, միջին<br>**մեծ** | Մեծ, փոքր, միջին | Մեծ, փոքր, միջին<br>**ցածր** | Մեծ, փոքր, միջին |
| **Անհատ բարերարներ** | Կան մի շարք անհատ բարերարներ, ովքեր ժամանակ առ ժամանակ աջակցություն են ցուցաբերում Իջևանի տարբեր բնակավայրերին (օրինակ՝ Բերքաբեր, Դիտավան, Աչաջուր և այլն): Համայնքը պետք է շարունակի աշխատանքները նոր բարերարներ ներգրավելու և նրանց ջանքերը ընդլայնելու ուղղությամբ: | Մեծ, փոքր, միջին<br>**մեծ** | Մեծ, փոքր, միջին | Մեծ, փոքր, միջին<br>**ցածր** | Մեծ, փոքր, միջին |
| **Հայտնի և/կամ ՀՀ-ից դուրս բնակվող իջևանցիներ՝ ներառյալ համայնքի այլ բնակավայրերի** | Իջևան համայնքից դուրս, ՀՀ այլ համայնքներում և նաև ՀՀ-ից դուրս բնակվում են հայտնի և բարեկեցիկ շատ իջևանցիներ՝ ներառյալ համայնքի այլ բնակավայրերից, որոնց հետ նպատակային և շարունակական աշխատանքը կարող է հանգեցնել նրան, որ նրանց ջանքերը, հեղինակությունը, քաղաքական և տնտեսական ազդեցությունը ի նպաստ դրվեն համայնքի խնդիրների հասցեագրմանը: | Մեծ, փոքր, միջին<br>**մեծ** | Մեծ, փոքր, միջին | Մեծ, փոքր, միջին<br>**ցածր** | Մեծ, փոքր, միջին |
| **Միջազգային կազմակերպություններ** | Մարզում՝ ներառյալ Իջևանում, իրականացվում են միջազգային դոնոր կազմակերպությունների մի շարք ծրագրեր, միջազգային կազմակերպությունները բավարար հետաքրքրություն են ցուցաբերում: Նրանց կողմից ծրագրերը բավական ազդեցություն են թողնում համայնքի զարգացման վրա: | Մեծ, փոքր, միջին<br>**միջին** | Մեծ, փոքր, միջին | Մեծ, փոքր, միջին<br>**միջին** | Մեծ, փոքր, միջին |
| **Հասարակական / բարեգործական կազմակերթյուններ** | Համայնքային զարգամացման ուղղությամբ Իջևանի տարածաշրջանում, Տավուշի մարզում և Երևանում գործում են շատ ՀԿ-ներ, որոնք իրենց փորձառության շնորհիվ կարող են որոշ ազդեցություն ունենալ համայնքային զարգացման գործընթացների վրա («Ուրբան» հիմնադրամ, ՀՕՖ, FCN-Անահիտ Քալանթարյան, «Սահման», «Հուսո տուն» և այլն): | Մեծ, փոքր, միջին<br>**միջին** | Մեծ, փոքր, միջին | Մեծ, փոքր, միջին<br>**միջին** | Մեծ, փոքր, միջին |

# ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ




**Պայմանական նշաններ**

- Քաղաքական ոլորտի շահակիրներ
- Տնտեսական ոլորտի շահակիրներ
- Հասարակական ոլորտի շահակիրներ

| Հ | Ա | |
|---|---|---|
| մեծ | միջին | Համայնքի ղեկավար |
| մեծ | միջին | Համայնքի ավագանի |
| մեծ | մեծ | ՏԿԵՆ |
| միջին | միջին | Տավուշի մարզպետարան |
| միջին | մեծ | ՀՀ Կառավարություն |
| միջին | միջին | Քաղաքական կուսակցություններ |
| միջին | մեծ | Ազ պատգամավորներ |
| միջին | միջին | Վիվասել |
| ցածր | միջին | Հանրային ծառայություններ իրականացնող այլ ընկերություններ |
| ցածր | միջին | Սուպերմարքեթներ |
| մեծ | ցածր | Բնակիչներ |
| մեծ | ցածր | Անհատ բարերարներ |
| մեծ | ցածր | Հայտնի և/կամ դրսում բնակվող իջևանցիներ |
| միջին | միջին | Միջազգային կազմակերպություններ |
| միջին | միջին | Հասարակական/բարեգործական կազմակերպություններ |

# ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով ներկա իրավիճակը՝ կատարվեց Իջևան բազմաբնակավայր համայնքի մշակութային ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (ՈւԹՀՍ-SWOT վերլուծություն) յուրաքանչյուր ոլորտի վերաբերյալ:

Ուժեղ և թույլ կողմերը վերաբերում են ներքին պոտենցիալին, իսկ հնարավորություններն ու սպառնալիքները՝ համայնքի վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոններ են, ուստի երբեմն ՈւԹՀՍ վերլուծությունը անվանում են ներքին/արտաքին վերլուծություն:

| **Ուժեղ կողմերը** | **Հնարավորությունները** |
| --- | --- |
| • Ի՞նչ առավելություն ունի ձեր բնակավայրը:<br>• Ի՞նչն է ձեր բնակավայրում ավելի լավ արվում, քան այլ համայնքներում:<br>• Ի՞նչ առանձնահատուկ կամ առավել էժան ռեսուրսներ կարող է ձեր բնակավայրն օգտագործել: | • Ի՞նչ հետաքրքիր զարգացումների մասին եք իրազեկ, որ կօգնի ձեր գործին:<br>• Ի՞նպիսի դրական հետաքարարություն կա բնակավայրի նկատմամբ:<br>• Ի՞նչ դրական փոփոխություններ են եղել քաղաքականության մեջ համայնքների վերաբերյալ: |
| • Մշակույթի ոլորտի ավանդույթները<br>• Համայնքի ղեկավարության քաղաքական կամքի առկայություն<br>• Համայնքի ներկայացուցչական ավագանի<br>• Ավագանու մեջ կին անդամների բավականին մեծ տեսակարար կշիռ<br>• Ակտիվ, համագործակցող աշխատակազմ<br>• Պատրաստակամ, համագործակցող բնակավայրեր<br>• Համաֆինանսավորման պատրաստակամություն համայնքի կողմից | • Ֆինանսավորման տարբեր աղբյուրներից մեծ է աջակցության ցանկությունը՝ որպես սահմանամերձ բնակավայրեր ունեցող համայնք<br>• Համայնքային բյուջեից բացի, ֆինանսական այլ հնարավորությունների առկայություն<br>• Սուբվենցիոն ծրագրերի առկայություն<br>• Հայաստան-Վրաստան ճանապարհի խաչմերուկում գտնվելը<br>• Քույր քաղաքների առկայությունը |
| **Թույլ կողմերը** | **Սպառնալիքներ** |
| • Ի՞նչը պետք է բարելավել:<br>• Ինչի՞ց պետք է խուսափել:<br>• Ի՞նչ ռեսուրսներ են բացակայում: | • Ի՞նչ խոչընդոտների եք բախվում:<br>• Արդյո՞ք քաղաքական, տնտեսական որոշումները, փոփոխությունները բացասաբար են ազդել բնակավայրի վրա |
| • Խորհրդային մշակութային գաղափարախոսությանը բնորոշ կարծրատիպային մտածողություն<br>• Ստեղծարարության և ձեռնարկատիրական հմտությունների բացակայություն ժամանակակից միտումներին համահունչ<br>• Մշակութային ենթակառուցվածքների պակաս կամ դրանց ոչ արդյունավետ օգտագործում:<br>• Մշակութային քաղաքականության գերկենտրոնացում կենտրոն բնակավայրում, պասիվ մշակութային կյանք համայնքի մյուս բնակավայրերում<br>• Մշակույթի ոլորտում մասնավոր հատվածի հետ թույլ համագործակցություն<br>• Օտար լեզուների թույլ իմացություն և տարածաշրջանը զբոսաշրջիկներին ներկայացնելու թույլ կարողություններ | • 14 սահմանամերձ բնակավայրեր<br>• Անվտանգության մշտական խնդիր<br>• Բնակավայրերի զարգացածության անհամաչափություն<br>• Համայնքների մասով մշակույթի զարգացման օրենսդրական կարգավորման անկատարություն |

## **ՏԵՍԼԱԿԱՆ.** ԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑ՝ ՄՇԱԿՈՒԹԱՀԵՆ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ (ՌՆ)

**ՌՆ 1** Ստեղծել և/կամ բարելավել մշակույթի զարգացման ենթակառուցվածքները՝ համահունչ մշակույթին ներկայացվող ժամանակակից պահանջների

**ՌՆ 2** Ապահովել մշակույթի մատուցումը/ իրականացումը

**ՌՆ 3** Ապահովել պատմա-մշակութային ժառանգության պահպանությունը

**ՌՆ 4** Բարելավել մշակութային զարգացմանն ուղղված կարողությունները

**ՌՆ 5** Բարելավել մշակութային ոլորտի արդյունավետ կառավարումը

### ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ (ՕՆ)

**ՕՆ 1.1** Առկա մշակութային ենթակառուցվածքների բարեկարգում և արդիականացում՝ համահունչ ժամանակակից պահանջներին
**Ծրագրեր**. 1.1.1, 1.1.2, 1.1.3

**ՕՆ 1.2** Նոր արդիական մշակութային ենթակառուցվածքների հիմնում ՝ համահունչ ժամանակակից պահանջներին
**Ծրագրեր**. 1.2.1, 1.2.2, 1.2.3, 1.2.4

**ՕՆ 1.3** Ենթակառուցվածքների ապահովում մշակութային/ արհեստագործական պրոդուկտներ (գործեր, ստեղծագործություններ) ստեղծելու նպատակով
**Ծրագրեր**. 1.3.1, 1.3.2, 1.3.3

**ՕՆ 1.4** Մշակույթի զարգացմանը նպաստող օժանդակ ենթակառուցվածքների ապահովում
**Ծրագրեր**. 1.4.1, 1.4.2, 1.4.3, 1.4.4

**ՕՆ 2.1** Համաիջևանյան մշակութային միջոցառումների իրականացում՝ ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով
**Ծրագրեր**. 2.1.1 - 2.1.1.1, 2.1.1.2, 2.1.1.3, 2.1.1.4, 2.1.1.5, 2.1.1.6, 2.1.1.7, 2.1.1.8

**ՕՆ 2.2** Բնակավայրերում մշակութային միջոցառումների իրականացում՝ ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով
**Ծրագրեր**. 2.2.1, 2.2.2, 2.2.3, 2.2.4, 2.2.5, 2.2.6

**ՕՆ 2.3** Ամենօրյա մշակութային գործունեության իրականացում ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով
**Ծրագրեր**. 2.3.1, 2.3.2

**ՕՆ 3.1** Նյութական պատմամշակութային ժառանգության պահպանման ապահովում
**Ծրագրեր**. 3.1.1, 3.1.2 3.1.3, 3.1.4, 3.1.5, 3.1.6

**ՕՆ 3.2** Ոչ Նյութական պատմամշակութային ժառանգության պահպանման ապահովում
**Ծրագրեր**. 3.2.1, 3.2.2

**ՕՆ 4.1** Արվեստի գծով կարողությունների բարձրացում, վերապատրաստում
**Ծրագրեր**. 4.1.1, 4.1.2 4.1.3, 4.1.4, 4.1.5, 4.1.6

**ՕՆ 4.2** Արհեստագործական կարողությունների բարձրացում, վերապատրաստում
**Ծրագրեր**. 4.2.1 - 4.2.1.1, 4.1.2, 4.2.1.3, 4.2.1.4, 4.2.1.5, 4.2.1.6

**ՕՆ 4.3** Զբոսաշրջության խթանման և կազմակերպման հետ կապված կարողությունների բարելավում և վերապատրաստում
**Ծրագրեր**. 4.3.1, 4.3.2.

**ՕՆ 5.1** Մշակութային ոլորտի հետ կապված հաղորդակցության և համայնքի ճանաչելիության բարելավում
**Ծրագրեր**. 5.1.1

**ՕՆ 5.2** Իրավական և ինստիտուցիոնալ հնարավորությունների ապահովում մշակույթի ոլորտի համար
**Ծրագրեր**. 5.2.1, 5.2.2 5.2.3

**Խնդիր 5.3** Միջմշակութային հաղորդակցության ապահովում հայաստանյան և արտասահմանյան գործընկերների հետ
**Ծրագրեր**. 5.3.1, 5.3.2.

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ | ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿ | ԾՐԱԳՐԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ |
|---|---|---|---|---|
| **ՌՆ 1**<br>Ստեղծել և/կամ բարելավել մշակույթի զարգացման ենթակառուցվածքները՝ համահունչ մշակույթին ներկայացվող ժամանակակից պահանջների | **ՕՆ 1.1**<br>Առկա մշակութային ենթակառուցվածքների բարեկարգում և արդիականացում՝ համահունչ ժամանակակից պահանջներին | **Ծրագիր 1.1.1 Իջևան.** «Աղջկա» բերդի, հարակից տարածքի վերանորոգում և պահպանում, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում՝ ոչ միայն որպես պատմա-ճարտարապետական ժառանգություն, այլև դրա զբոսաշրջային և տնտեսական ներուժը մեծացնելու նպատակով: | Երկարաժամկետ<br>2022-2026 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր<br>ԱՄՆ Դեսպանի ֆոնդ<br>Այլ միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված<br>(հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | | **Ծրագիր 1.1.2 Այգեհովիտ.** Սբ. Սրվեղի  հարակից տարածքի վերանորոգում և պահպանում, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում՝ ոչ միայն որպես պատմա-ճարտարապետական ժառանգություն, այլև դրա զբոսաշրջային և տնտեսական ներուժը մեծացնելու նպատակով: | Երկարաժամկետ<br>2022-2026 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր<br>ԱՄՆ Դեսպանի ֆոնդ<br>Այլ միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված<br>(հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | | **Ծրագիր 1.1.3** Նախկինում Իջևանի նկարիչների տան պատկերասրահի վերանորոգում և վերագործարկում՝ կազմակերպելու համայնքի բնակավայրերի տաղանդավոր նկարիչների գործընկեր համայնքների պատկերասրահների և Ազգային պատկերասրահի կտավները: | Միջնաժամկետ<br>2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | **ՕՆ 1.2**<br>Նոր արդիական մշակութային ենթակառուցվածքների հիմնում ՝ համահունչ ժամանակակից պահանջներին | **Ծրագիր 1.2.1 Գանձաքար.** Բազմաֆունկցիոնալ բացօթյա մշակութաին տարածքի ստեղծում՝ Գանձաքարի գետափնյա հատվածում՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ, համապատասխան ենթակառուցվածքներով: | Միջնաժամկետ<br>2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված<br>(Հանրային մասնավոր համագործակցություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Ծրագիր 1.2.2** Ժամանակակից միտումներին համահունչ ժամանցի վայրերի ստեղծում՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | | **Ծրագիր 1.2.3** Զբոսաշրջային տեղեկատվական հանգույցների ստեղծում բնակավայրերի վարչական շենքերում: | Կարճաժամկետ 2022-2023 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.2.4** «Իջևանատների»/«Քարվանսարա» ցանցի ստեղծման խթանում – հանրային, անհատական և տարբեր բիզնեսներին կից: | Միջնաժամկետ 2022-2026 | Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | **ՕՆ 1.3** Ենթակառուցվածքների ապահովում մշակութային/ արհեստագործական պրոդուկտներ (գործեր, ստեղծագործություններ) ստեղծելու նպատակով | **Ծրագիր 1.3.1 Կիրանց, Բերքաբեր, Ակնաղբյուր, Սարիգյուղ**. Հանրային կրթական և մշակութային տարածքների՝ որպես բազմաֆունկցիոնալ կրթական կենտրոնների ներուժի լիարժեք օգտագործում՝ աշխատանքային ժամերից հետո ապահովելով դրանց օգտագործում մշակույթի զարգացմանն ուղղված գործունեություն ծավալելու նպատակով | Կարճաժամկետ 2022-2023 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.3.2** Բացօթյա անհատական արվեստանոցների գործունեության հնարավորության ապահովում Իջևանի քանդակների զբոսայգու տարածքում | Կարճաժամկետ 2022-2023 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.3.3** Պատմա-երկրագիտական թանգարանի ներուժի օգտագործումը մշակույթի զարգացումը խթանելու նպատակով. բացօթյա փոքր դահլիճի օգտագործումը ամառային ցուցադրությունների համար, թանգարանի բաց պատշգամբի օգտագործումը որպես բեմ՝ թատերական ներկայացումների և ֆիլմերի ցուցադրության համար: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ՕՆ 1.4**<br>Մշակույթի զարգացմանը նպաստող օժանդակ ենթակառուցվածքների ապահովում | **Ծրագիր 1.4.1 Աչաջուր.** Մակարավանքի և շրջակայքի լուսավորություն ապահովում: | Միջնաժամկետ<br>2022-2024 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.4.1.1 Աչաջուր.** Մշակույթի տան վերանորոգում, ջեռուցում: | Երկարաժամկետ<br>2022-2026 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.4.2 Դիտավան.** «Կաթնով պատած» և «Համզոյի քար» կոչվող տարածքի արահետների կառուցման անհրաժեշտություն | Երկարաժամկետ<br>2022-2026 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր |
| | | **Ծրագիր 1.4.3 Իջևան.** Գեղարվեստական լուսավորության անցկացում Քանդակների զբոսայգու տարածքում: | Կարճաժամկետ<br>2022-2023 | Համայնքի բյուջե<br>Սուբվենցիոն ծրագիր<br>Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 1.4.4** Համապատասխան մասնագիտական գույքի և սարքավորումների ապահովում համայնքապետարանի մշակութային միջոցառումների անցկացման համար | Կարճաժամկետ<br>2022-2023 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (Հանրային մասնավոր համագործակցություն) |

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ | ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿ | ԾՐԱԳՐԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ |
|---|---|---|---|---|
| **ՌՆ 2.**<br><br>Ապահովել մշակույթի մատուցումը/ իրականացումը | **ՕՆ 2.1**<br><br>Համաիջևանյան մշակութային միջոցառումների իրականացում (տոներ, փառատոներ, ծեսեր)՝ ստեղծարար մոտեցմամբ, | **Ծրագիր 2.1.1** Ամենամյա մշակութային շաբաթի անցկացում՝ «Իջևան. Մշակույթի հետ, մշակույթի մեջ» կամ «Մշակութասեր, մշակութաբեր Իջևան» կամ «Իջևանը՝ ՄՇԱԿՈՒԹԱՎԱՆ» խորագրով, որի ներքո կիրականացվեն հետևյալ ենթածրագրերը (ամիսը՝ հուլիս, շաբաթը՝ շարժական). | Միջնաժամկետ<br>2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով | **Ծրագիր 2.1.1.1** Վարդավառի համայնքային տոնակատարություն՝ ներառյալ բնակավայրերում:<br><br>**Ծրագիր 2.1.1.2** Քանդակագործության սիմպոզիումի վերակազմակերպում քանդակների այգում, որտեղ տեղում կկերտվեն քանդակները և կապահովվի մուրճի մշտական զնգոցը՝ աշխատող արվեստագետի արծանի մուրճի «հարվածներից»:<br><br>**Ծրագիր 2.1.1.3** Իջևանի քանդակների այգին դարձնել Վերնիսաժ՝արվեստի գործերի և արհեստագործական արտադրանքի ցուցադրության և վաճառքի համար:<br><br>**Ծրագիր 2.1.1.4** «Արարիր ինքդ» բացօթյա արվեստանոցի ստեղծում, որտեղ մասնակիցները ձեռք կբերեն արվեստագործական և արհեստագործական հմտություններ (գորգագործություն, խոհարություն, քանդակագործություն և այլն) և ինքնուրույն կստեղծագործեն:<br><br>**Ծրագիր 2.1.1.5** Բակային խաղերի հանրապետական առաջնության/փառատոնի անցկացում:<br><br>**Ծրագիր 2.1.1.6** Իջևան-ԳՈՒՐՄԱՆ համաիջևանյան ուտեստների ֆեստ: Բաղադրատոմսերի ուղեցույցի և ուտեստների ճաշացանկի պատրաստում՝ մայրենի և օտար լեզուներով:<br><br>**Ծրագիր 2.1.1.7** «Իջևանը և իջևանցիները» խորագրով համայնքի՝ ժողովրդական բանահյուսությունների վրա հիմնված ներկայացումների ցուցադրում: Ժողովրդական բանահյուսության գրքույքի մշակում և տպագրություն:<br><br>**Ծրագիր 2.1.1.8** Ազգային և ժամանակակից երգի, պարի փառատոնի անցկացում: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՕՆ 2.2<br><br>Բնակավայրերում մշակութային միջոցառումների իրականացում (տոներ, փառատոներ, ծեսեր)՝ ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով | **Ծրագիր 2.2.1 Խաշթառակ.** «Մենք ենք՝ մեր սարերը» կինոփառատոնի կազմակերպում՝ օգտագործելով հայտնի ֆիլմի մշակութային ներուժը զբոսաշրջության խթանման համար, այդ թվում՝ «Ոսկե ծիրան» փառատոնի ֆիլմերի ցուցադրություն:<br><br>**Ծրագիր 2.2.2** Մշակութային ստեղծարար, նորարար զբոսաշրջության խթանում Իջևանի բնակավայրերում՝ տնտեսական հնարավորություններով:<br><br>**Ծրագիր 2.2.3** Քանդակի շրջիկ փառատոն Իջևանի բնակավայրերում՝ քանդակների այգու քանդակների մի մասը տեղափոխելով Իջևան համայնքի այլ բնակավայրեր:<br><br>**Ծրագիր 2.2.4 Գանձաքար**: Լոբի-լոբիլանդ-լոբբինգ փառատոնի կազմակերպում՝ լոբու օղու մատուցմամբ:<br><br>**Ծրագիր 2.2.5 Դիտավան.** Բնապատկեր՝ Դիտավանի բարձունքից-նկարչական փառատոն:<br><br>**Ծրագիր 2.2.6** Հոլոգրաֆիկ շրջիկ թանգարանի ցուցադրություններ Իջևանի բնակավայրերում: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | ՕՆ 2.3<br><br>Ամենօրյա մշակութային գործունեության իրականացում (տոներ, փառատոներ, ծեսեր)՝ ստեղծարար մոտեցմամբ, նոր տեխնոլոգիական լուծումներով և տնտեսական մոտիվացիաներով | **Ծրագիր 2.3.1** Պատմա-երկրագիտական թանգարանի բացօթյա տարածքում ներկայացումների, կինոդիտումների, գեղարվեստական, արհեստագործական ցուցադրությունների կազմակերպում:<br><br>**Ծրագիր 2.3.2** Շարունակական աջակցություն համայնքի մշակութային հաստատությունների (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց, մշակույթի տուն, պատկերասրահ, գրադարան և այլն) ամենօրյա գործունեությանը, այդ հաստատությունների գործունեության տարածմանը մյուս բնակավայրերում, մշակութային հաստատություններին և դրանց | | Համայնքի բյուջե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գործունեության արդիականացմանը՝ համահունչ ժամանակից պահանջներին: | | |

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ | ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿ | ԾՐԱԳՐԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ |
|---|---|---|---|---|
| **ՌՆ 3**<br>Ապահովել պատմա-մշակութային ժառանգության պահպանությունը | **ՕՆ** 3.1<br>Նյութական պատմամշակութային ժառանգության պահպանման ապահովում | **Ծրագիր 3.1.1** Աղստևի հովտի պատմական հուշարձանների ուսումնասիրություն, երիտասարդների ներգրավումը հետազոտությունների մեջ: | Երկարաժամկետ<br><br>2022-2026 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (հանրային-մասնավոր համագործակցություն) |
| | | **Ծրագիր 3.1.2** Համայնքի համար ավանդույթային համարվող կարպետագործության, գորգագործության, կավագործության ավանդույթների խթանում, արդիականացում և տարածում:<br><br>**Ծրագիր 3.1.3** Համայնքի/բնակավայրերի խոհանոցի, ճաշատեսակների տարածում, փորձի փոխանակում, գույքագրում և ուսուցում:<br><br>**Ծրագիր 3.1.4** Համայնքին ներհատուկ ավանդական արհեստների գույքագրում, փորձի փոխանակում և վերապատրաստում:<br><br>**Ծրագիր 3.1.5** Բոլոր բնակավայրերում պատմա-մշակութային հաստատությունների քարտեզագրում, դրանց նկարագրություն, և դրանց հետ կապված իրականացված կամ իրականացվող ծրագրերի մատնանշում:<br><br>**Ծրագիր 3.1.6** Պատմամշակութային զբոսաշրջության փաթեթի մշակում և կազմակերպում: | Միջնաժամկետ<br><br>2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ՕՆ 3.2**<br>Ոչ Նյութական պատմամշակութային ժառանգության պահպանման ապահովում | **Ծրագիր 3.2.1** Վարդավառի տոնի վերաիմաստավորում, ընդլայնում Իջևանի սահմաններից դուրս դեպի բնակավայրեր<br><br>**Ծրագիր 3.2.2** Համայնքի բնակավայրերի ժողովրդական բանահյուսության, լեգենդների, պատմությունների հավաքում, մշակում և տարածում | Կարճաժամկետ 2022-2023 | |

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ | ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿ | ԾՐԱԳՐԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ |
|---|---|---|---|---|
| **ՌՆ 4**<br>Մշակութային զարգացմանն ուղղված կարողություններ բարելավում | **ՕՆ 4.1**<br>Արվեստի գծով կարողությունների բարձրացում, վերապատրաստում | **Ծրագիր 4.1.1** Դասավանդող արվեստագետների և արհեստագործների տվյալների շտեմարանի և դասավանդման ծրագրի պատրաստում | Կարճաժամկետ – 2022-2023 | Համայնքի բյուջե Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 4.1.2** Անիմացիոն ֆիլմերի նկարահանում արվեստի ոլորտի մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ | Կարճաժամկետ – 2022-2023 | Համայնքի բյուջե Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 4.1.3** Մասնագիտական կողմնորոշման դասընթացներ «Նովել» սրճարանում: | Կարճաժամկետ – 2022-2023 | Համայնքի բյուջե Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 4.1.4** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արվեստի մենեջմենթ/արվեստի շուկայագիտություն դասավանդում | Կարճաժամկետ – 2022-2023 | Համայնքի բյուջե Միջազգային կազմակերպություններ |
| | | **Ծրագիր 4.1.5** Երեխաների մշակութային կրթություն՝ տարեցների միջոցով (TOY՝ together young and old) | Կարճաժամկետ – 2022-2023 | Համայնքի բյուջե Միջազգային կազմակերպություններ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ՕՆ 4.2** Արհեստագործական կարողությունների բարձրացում, վերապատրաստում | **Ծրագիր 4.2.1** Վարպետաց դասերի անցկացում՝ ստեղծարար մոտեցմամբ և հնարավոր տնտեսական հեռանկարով<br><br>**Ծրագիր 4.2.1.1** Տնայնագործական գորգագործության վերապատրաստում և խթանում: Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար:<br><br>**Ծրագիր 4.2.1.2** Կարպետագործության, գորգագործության, կավագործության վերապատրաստում այդ արհեստների ավանդույթների խթանման և տարածման նպատակով: Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար:<br><br>**Ծրագիր 4.2.1.3** Պլաստիկից ստացված թելով կարպետներ գործելու վերապատրաստում: Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար:<br><br>**Ծրագիր 4.2.1.4** Ագաթի մշակման, փայտագործության, խաչքարագործության վերապատրաստում այդ արհեստների խթանման և տարածման նպատակով : Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար:<br><br>**Ծրագիր 4.2.1.5** Բատիկայով զբաղվելու նպատակով կանանց արվեստանոցի ստեղծում, ովքեր կարող են դասավանդել սկսած 3-4 տարեկանից բարձր երեխաների: Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար:<br><br>**Ծրագիր 4.2.1.6** Վերապատրաստում լոբու օղու ստացման նպատակով: Հատուկ դասընթաց նաև զբոսաշրջիկների համար: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>Մասնավոր հատված (Հանրային մասնավոր համագործակցություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ՕՆ 4.3** Զբոսաշրջության խթանման և կազմակերպման հետ կապված կարողությունների բարելավում և վերապատրաստում | **Ծրագիր 4.3.1** Զբոսաշրջավարների վերապատրաստում՝ ներառելով օտար լեզուների իմացությունը<br><br>**Ծրագիր 4.3.2** Զբոսաշրջային երթուղիների մշակում, քարտեզագրում և հավելվածի ստեղծում կամ ՀՀ-ում առկա հավելվածի/հավելվածների մեջ ներառում: | | |

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ | ՕՊԵՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿ | ԾՐԱԳՐԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ |
|---|---|---|---|---|
| **ՌՆ 5**<br>Բարելավել մշակութային ոլորտի արդյունավետ կառավարումը | **ՕՆ 5.1**<br>Մշակութային ոլորտի հետ կապված հաղորդակցության և համայնքի ճանաչելիության բարելավում | **Ծրագիր 5.1.1** Վարքագծային փոփոխություններին ուղղված սոցիալական հոլովակների, տեղեկատվական նյութերի պատրաստում, գիտելիքի մրցույթների անցկացում մշակութային և բնապահպանական թեմաներով: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | **ՕՆ 5.2**<br>Իրավական և ինստիտուցիոնալ հնարավորությունների ապահովում մշակույթի ոլորտի համար | **Ծրագիր 5.2.1** Մշակութային կադաստրի ստեղծում. ինտերակտիվ քարտեզ, բոլոր բնակավայրերի մշակութային հաստատությունների ու բիզնեսների քարտեզագրում, դրանց նկարագրություն և դրանց հետ կապված իրականացված կամ իրականացվող ծրագրերի ներկայացում:<br><br>**Ծրագիր 5.2.2** Մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության գույքագրում:<br><br>**Ծրագիր 5.2.3** Հարկային արտոնությունների տրամադրում համայնքի և պետության կողմից մշակույթի ոլորտին աջակցող բիզնեսներին: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |
| | **Խնդիր 5.3**<br>Միջմշակութային հաղորդակցության | **Ծրագիր 5.3.1** Փորձի փոխանակման այցելություններ հայաստանյան և արտասահմանյան գործընկեր համայնքներ: | Միջնաժամկետ 2022-2024 | Համայնքի բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ապահովում հայատանյան և արտասահմանյան գործընկերների հետ | **Ծրագիր 5.3.2** Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ և մասնակցությամբ մշակույթային միջոցառումների անցկացում, ոչ միայն մշակութային հաստատություններում, այլ մասնավոր հատվածի գրասենյակներում: | | Մասնավոր հատված (Հանրային մասնավոր համագործակցություն) |

# ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

Մշակութային զարգացման ռազմավարության իրականացման գործընթացների տարբեր փուլերում նախատեսվում է իրականացվել մշտադիտարկում:

Մշտադիտարկումը իրականացվելու է համայնքային բյուջեի հաշվին: Պատշաճ մշտադիտարկում իրականացնելու համար համայնքի բյուջեում առանձնացվելու է տող մշտադիտարկման ծախսերի համար:

Մշտադիտարկման պլանը ներառվելու է Համայնքի զարգացման ծրագրի՝ տարեկան աշխատանքային պլանների մեջ: Ռազմավարության շրջանակներում իրականացվող բոլոր ծրագրերի/գործողությունների համար նախատեսված է մշակել ցուցիչների եռաստիճան աղյուսակ՝ կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ արդյունքների ցուցիչներ: Ցուցիչները կունենան ստուգման հստակ միջոցներ:

Ռազմավարության գնահատման համար նախատեսվում է իրականացնել արտաքին գնահատում՝ միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման ժամանակահատվածում: Գնահատման նպատակն է չափել ռազմավարության իրականացման աստիճանը, տրամադրի ռազմավարության բարելավման առաջարկներ:

Մշակութային ռազմավարության գնահատման արդյունքները պետք է հասանելի լինեն հանրությանը, որի հետ քննարկումը կօգնի վավերացնել գնահատման արդյունքները և կապահովի ռազմավարության իրականացման թափանցիկությունը:

Տե՛ս գործողությունների/ծրագրերի կատարման մշտադիտարկման իրականացման պարզ աղյուսակի օրինակը՝ ստորև.

| No | Գործողության կամ միջոցառման նկարագրություն | Ակնկալվող արդյունք | Ինդիկատոր | Ժամանակա-հատված | Պատասխանատու անձ | Ֆինանսավորման աղբյուր | Նշումներ մոնիթորինգի/ առաջնային տվյալների հավաքման աղբյուրների/ ձևերի մասին |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |
| 4. | | | | | | | |
| 5. | | | | | | | |